ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
«12» Դեկտեմբեր 2020թ. N 348-Լ
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
«23» Դեկտեմբեր 2020թ. N 104-Լ
ք. Երևան

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՀՐԴԵՀՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՊԼԱՆԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հրդեհային անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «ե» կետերով և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 740-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1.Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) անտառային և բնության հատուկ պահպանվող տարածքներում առաջացած հրդեհներին արագ արձագանքելու և արդյունավետ հրդեհաշիջում իրականացնելու նպատակով հաստատել՝

1) անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլանի օրինակելի ձևը՝ համաձայն Հավելված N 1-ի.

2) անտառային և բնության հատուկ պահպանվող տարածքների հրդեհների մարման, հրդեհավտանգության հսկողությանն ուղղված միջոցառումների և պարեկության կազմակերպման օրինակելի ձևը՝ համաձայն Հավելված N 2-ի.

3) անտառտնտեսության կամ բնության հատուկ պահպանվող տարածքի կառավարումն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից հրդեհաշիջում իրականացնող ստորաբաժանումների ցանկի օրինակելի ձևը՝ համաձայն

Հավելված N 3-ի.

4) Անտառային, բնության հատուկ պահպանվող տարածքների հրդեհների վերաբերյալ ահազանգերի ստացման, հրդեհների հաշվառման և անտառային կամ բնության հատուկ պահպանվող տարածքում բռնկված հրդեհի մասին տեղեկատվության օրինակելի ձևը՝ համաձայն Հավելված N 4-ի.

5) հրդեհավտանգության մոնիթորինգի կազմակերպման և իրականացման օրինակելի ձևը՝ համաձայն Հավելված N 5-ի.

6) անտառային կամ բնության հատուկ պահպանվող տարածքում բռնկված հրդեհներին արձագանքող ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ԱԻՆ) փրկարար ծառայության (այսուհետ՝ ՓԾ) ստորաբաժանումների ցանկի օրինակելի ձևը՝ համաձայն Հավելված N 6-ի:

2. Սահմանել, որ անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլանները մշակվում են անտառտնտեսությունների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարումն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից և յուրաքանչյուր տարի մինչև մարտի 31-ը ներկայացվում են ԱԻՆ ՓԾ համապատասխան տարածքային ստորաբաժանման համաձայնեցմանը:

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

12.03.2020

X

ՖԵԼԻՔՍ ՑՈԼԱԿՅԱՆ

Подписано: TSOLAKYAN FELIKS 3701520046

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

«12» Դեկտեմբեր 2020թ. N 348-Լ

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

«23» Դեկտեմբեր 2020թ. N 104-Լ

ք. Երևան

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՀՐԴԵՀՆԵՐԻ ԱՐԳԱԳԱՆՔՄԱՆ ՊԼԱՆԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հրդեհային անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «ե» կետերով և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 740-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1.Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) անտառային և բնության հատուկ պահպանվող տարածքներում առաջացած հրդեհներին արագ արձագանքելու և արդյունավետ հրդեհաշիջում իրականացնելու նպատակով հաստատել՝

1) անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլանի օրինակելի ձևը՝ համաձայն Հավելված N 1-ի.

2) անտառային և բնության հատուկ պահպանվող տարածքների հրդեհների մարման, հրդեհավտանգության հսկողությանն ուղղված միջոցառումների և պարեկության կազմակերպման օրինակելի ձևը՝ համաձայն Հավելված N 2-ի.

3) անտառտնտեսության կամ բնության հատուկ պահպանվող տարածքի կառավարումն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից հրդեհաշիջում իրականացնող ստորաբաժանումների ցանկի օրինակելի ձևը՝ համաձայն

Հավելված N 3-ի.

4) Անտառային, բնության հատուկ պահպանվող տարածքների հրդեհների վերաբերյալ ահազանգերի ստացման, հրդեհների հաշվառման և անտառային կամ բնության հատուկ պահպանվող տարածքում բռնկված հրդեհի մասին տեղեկատվության օրինակելի ձևը՝ համաձայն Հավելված N 4-ի.

5) հրդեհավտանգության մոնիթորինգի կազմակերպման և իրականացման օրինակելի ձևը՝ համաձայն Հավելված N 5-ի.

6) անտառային կամ բնության հատուկ պահպանվող տարածքում բռնկված հրդեհներին արձագանքող ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ԱԻՆ) փրկարար ծառայության (այսուհետ՝ ՓԾ) ստորաբաժանումների ցանկի օրինակելի ձևը՝ համաձայն Հավելված N 6-ի:

2. Սահմանել, որ անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլանները մշակվում են անտառտնտեսությունների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարումն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից և յուրաքանչյուր տարի մինչև մարտի 31-ը ներկայացվում են ԱԻՆ ՓԾ համապատասխան տարածքային ստորաբաժանման համաձայնեցմանը:

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 1
Արտակարգ իրավիճակների
նախարարի «12» մարտի 2020թ. N 348-Լ և
Շրջակա միջավայրի նախարարի
«23» մայիսի 2020թ. N 104-Լ համատեղ հրամանի
Օրինակելի ձև 1

ՊԼԱՆ

ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՀՐԴԵՀՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ

1. Անտառային և բնության հատուկ պահպանվող տարածքի բնութագիրը (անտառի մակերեսը, ծառատեսակները, քարտեզը և այլն):

Նշվում է անտառային, բնության հատուկ պահպանվող տարածքի զբաղեցրած ընդհանուր մակերեսը (հա), լրացվում է աղյուսակը:

Անտառպետություն, բնության հատուկ պահպանվող տարածք	Անտառպետության պահաբաժինները, բնության հատուկ պահպանվող տարածքի մասնաճյուղերը, պահաբաժինները	Վարչական շրջանը	Ընդհանուր մակերեսը, հա
1	2	3	4

Տեղեկագիր

Ըստ հրդեհավտանգության դասերի անտառային և բնության հատուկ պահպանվող տարածքների տեղաբաշխման

Անտառպետություն, բնության հատուկ պահպանվող տարածք	Հրդեհավտանգավորության դասը					Ընդամենը
	1	2	3	4	5	

Նշվում է հրդեհավտանգ ժամանակահատվածի մասին:

2. Անտառտնտեսությունում, բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարումն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպությունում աշխատակիցների թիվը, առկա տեխնիկայի քանակը, այդ թվում նաև անտառային

հրդեհների մարման համար նախատեսված տեխնիկական միջոցների քանակն ու տեսակը (հրշեջ ավտոմեքենաներ, հրշեջ մոտոպոմպեր, փողակներ, փողրակներ, ձեռքի պարզագույն գործիքներ՝ հեղուկացիր ուսապարկ սրսկիչներ, կտրող գործիքներ, կրակին հարվածող գործիքներ՝ և այլն):

Մանրամասն նշվում է աշխատակիցների թվի, առկա տեխնիկայի քանակի, այդ թվում նաև անտառային հրդեհների մարման համար նախատեսված տեխնիկական միջոցների քանակի ու տեսակի մասին:

3. Անտառում, բնության հատուկ պահպանվող տարածքում գտնվող ջրաղբյուրների տեղերը, տեսակը և դրանցից օգվելու հնարավորությունները:

Նշվում է տարածքում առկա ջրաղբյուրների և դրանցից օգտվելու հնարավորությունների մասին:

4. Անտառային, բնության հատուկ պահպանվող տարածքի ճանապարհների ցանցն ու վիճակը, դրանցով երթևեկելու հնարավարությունները:

Նշվում է համապատասխան տարածքի ճանապարհների վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը (ճանապարհների երկարությունը, լայնությունը, ծածկը, հանքայնացված շերտերի առկայութունը, երկարությունը, լայնությունը և այլն) և դրա համար պատասխանատու անձի տվյալները:

5. Հրդեհների դեպքում ներգրավվող անձանց սպասարկման, սննդի, խմելու ջրով ապահովելու և անհրաժեշտության դեպքում՝ առաջին բուժօգնություն ցուցաբերելու պայմանները:

Նշվում է հրդեհների մարմանը ներգրավված անձանց սննդով, խմելու ջրով ապահովելու և անհրաժեշտության դեպքում՝ առաջին բուժօգնություն ցուցաբերելու հնարավորությունների և պայմանների մասին:

Արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության ստորաբաժանումների անձնակազմի համակողմանի ապահովումն իրականացվում է Փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության կողմից:

6. Համապատասխան տեխնիկայի և տրանսպորտային միջոցների համար նախատեսված պահեստային վառելանյութի պաշարների առկայությունը:

Նշվում է հրդեհների դեպքում տեխնիկայի և տրանսպորտային միջոցների համար պահեստային վառելանյութի պաշարներ նախատեսված են թե ոչ:

7. Անտառային հրդեհների վերաբերյալ ահազանգերի ստացումը և հրդեհների հաշվառումը:

Համապատասխան հավելվածում նշվում է հրդեհների վերաբերյալ ահազանգերի ստացման և հրդեհների հաշվառման մասին:

8. Անտառին, բնության հատուկ պահպանվող տարածքին հարակից համայնքների բնակչությանը անտառային հրդեհներին ներգրավելու հնարավորությունները:

Նշվում է անտառին կամ բնության հատուկ պահպանվող տարածքին հարակից համայնքի բնակչությանը ներգրավելու հնարավորության և տեղական ինքնակառավարման մարմինների հետ փոխհամագործակցության մասին:

9. Անտառտնտեսության, բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարումն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տվյալ տարում անտառի հրդեհային անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումները:

Նշվում է տվյալ տարում անտառտնտեսության կամ բնության հատուկ պահպանվող տարածքի կառավարումն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից հրդեհային անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումների մասին:

10. Անտառային, բնության հատուկ պահպանվող տարածքներում ուղղաթիռների համար ժամանակավոր վայրէջքային հրապարակների առկայությունը:

Նշվում է անտառտնտեսության կամ բնության հատուկ պահպանվող տարածքում ուղղաթիռների համար ժամանակավոր վայրէջքային հրապարակների առկայության մասին:

11. Անտառային, բնության հատուկ պահպանվող տարածքներում կապի հասանելիության վիճակը:

Նշվում է անտառային կամ բնության հատուկ պահպանվող տարածքում կապի առկայության և հասանելիության մասին: Տարածքում հսկողական կետերի՝ աշտարակների և նմանօրինակ այլ միջոցների և պատասխանատու անձի տվյալների մասին:

12. Անտառային, բնության հատուկ պահպանվող այն տարածքներում որտեղ կան հանգստյան գոտիներ և զբոսաշրջության երթուղիներ, հրդեհաշիջման

սկզբնական միջոցների, պաստառների, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումների առկայությունը:

Նշվում են այն տարածքները, որտեղ կան հանգստյան գոտիներ և ինչ միջոցառումներ են իրականացվել հրդեհային անվտանգության բարելավման ուղղությամբ (տեղադրվել են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցվել են պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն):

13. Անտառային կամ բնության հատուկ պահպանվող տարածքում բռնկված հրդեհներին արձագանքող Արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ԱԻՆ) Փրկարար ծառայության (այսուհետ՝ ՓԾ) ստորաբաժանումները:

Համապատասխան հավելվածում նշվում է բռնկված հրդեհներին արձագանքող ԱԻՆ փրկարար ծառայության տարածքային ստորաբաժանումների մասին:

14. Կառավարման կազմակերպումը:

Անտառտնտեսության կամ բնության հատուկ պահպանվող տարածքներում բռնկված հրդեհների մարմանն անմիջապես ներգրավվում են համապատասխան անտառտնտեսության և բնության հատուկ պահպանվող տարածքները կառավարող ՊՈԱԿ-ների ուժերն ու միջոցները: Հրդեհաշիջման աշխատանքները ղեկավարում է համապատասխան անտառտնտեսության կամ բնության հատուկ պահպանվող տարածքի հրդեհաշիջման համար պատասխանատու պաշտոնատար անձը: Եթե ներգրավված ուժերին չի հաջողվում մարել հրդեհը, ապա՝ հրդեհաշիջման աշխատանքներին ներգրավվում են ԱԻՆ ՓԾ ստորաբաժանումները: Հրդեհաշիջման աշխատանքները սկզբնական փուլում ղեկավարում է ՓԾ համապատասխան մարզային փրկարարական վարչության պետը կամ նրան փոխարինող անձը: Հետախուզության արդյունքների և հրդեհների չափերից ելնելով, հրդեհաշիջման ղեկավարը ստեղծված իրավիճակի վերաբերյալ զեկուցում է ՓԾ վերադաս պետին, որից հետո որոշում է կայացվում հրդեհաշիջման աշխատանքներին Պաշտպանության նախարարության, Ոստիկանության ստորաբաժանումների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ու մոտակա համայնքների բնակչությանը ներգրավելու վերաբերյալ: ՓԾ ղեկավարը, ստանալով անտառային հրդեհի մասին հաղորդագրությունը, անհապաղ միջոցներ է ձեռնարկում արդյունավետ հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպման ուղղությամբ: Անտառային կամ բնության հատուկ պահպանվող տարածքի անվտանգ տեղամասում ծավալվում է օպերատիվ շտաբ, որի կազմում

ընդգրկվում են լիազոր մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ: Նշանակվում են հրդեհաշիջման աշխատանքների տեղամասերի ղեկավարներ, նրանց ենթակայությանը տրամադրվում են ուժեր և միջոցներ: Իրականացվող գործողությունների ընդհանուր համակարգումն իրականացվում է ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի (այսուհետ՝ ՃԿԱԿ) միջոցով:

15. Կապի կազմակերպումը:

Անտառային կամ բնության հատուկ պահպանվող տարածքներում արդյունավետ հրդեհաշիջում իրականացնելու նպատակով, կապը կազմակերպվում է Արտակարգ իրավիճակների նախարարի, ՓԾ տնօրենի օպերատիվ շտաբի, հրդեհաշիջման շտաբի, հրդեհաշիջման տեղամասերի, ՓԾ ՃԿԱԿ-ի, մարզային ճգնաժամային կենտրոնների միջև, ռադիոկայանների, բջջային և ֆիքսված կապի միջոցներով: Կապ կազմակերպվում է նաև Արտակարգ իրավիճակների նախարարի և ՓԾ տնօրենի շարժական կառավարման կետերի հետ:

16. Հրդեհի վայրի հետախուզության կազմակերպումը:

Անտառային կամ բնության հատուկ պահպանվող տարածքներում հետախուզությունն իրականացվում է հրդեհաշիջման ղեկավարումը ստանձնած ՓԾ պաշտոնատար անձի գլխավորությամբ՝ անտառտնտեսության կամ բնության հատուկ պահպանվող տարածքի ներկայացուցիչի մասնակցությամբ: Հետախուզությունը կարող է կատարվել ինչպես օդային, այնպես էլ ցամաքային եղանակով: Հետախուզության ընթացքում ձեռք բերված տվյալները վերլուծվում և զեկուցվում են Արտակարգ իրավիճակների նախարարին, ՓԾ տնօրենին և փոխանցվում են ՓԾ ՃԿԱԿ-ին:

Հավելված N 2
Արտակարգ իրավիճակների
նախարարի «12» մարտի 2020թ. N 348-Լ և
Շրջակա միջավայրի նախարարի
«23» մարտի 2020թ. N 104-Լ համատեղ հրամանի
Օրինակելի ձև 2

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՐԴԵՀՆԵՐԻ ՄԱՐՄԱՆ, ՀՐԴԵՀԱՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԱՐԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՆՏԱՌԱՅԻՆ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՐԴԵՀՆԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

№	Անուն, ազգանուն, հայրանուն	Պաշտոնը	Պատասխանատու անձի տվյալները
1			

ՑԱՆԿ
ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿԱՄ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀՐԴԵՀԱՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ և ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

№	Միջոցառման անվանումը	Իրականացման ժամկետը	Պատասխանատու անձը
1	2	3	4

ԱՆՏԱՌԱՅԻՆ, ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

№	Պարեկություն իրականացնող մարմինը	Պարեկու-թյան ձևը (օդային, ցամաքային)	Տարածքը որտեղ իրականացվում է պարեկություն)	Պարեկության իրականացման ժամանակահատվածը	Պատասխանատու անձը
1	2	3	4	6	7

Հավելված N 3
Արտակարգ իրավիճակների
նախարարի «12» մարտի 2020թ. N 348-Լ և
Շրջակա միջավայրի նախարարի
«23» մարտի 2020թ. N 104-Լ համատեղ հրամանի
Օրինակելի ձև 3

ՑԱՆԿ
ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

№	Ստորաբաժան-ման անվանումը	Տեղակայման վայրը և հեռախոսահամարները	Հրդեհաշիջ-մանը մասնակ-ցող աշխատա-կիցների թիվը	Հրդեհաշիջ-ման միջոցները և քանակը	Նշումներ
1	2	3	4	5	6

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿԱՄ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄԸ ՂԵԿԱՎԱՐԵԼՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

№	Անուն, ազգանուն, հայրանուն	Պաշտոնը և աշխատանքային ստաժը	Հեռախոսահամարը	Նշում-ներ
1	2	3	4	5

Հավելված N 4
Արտակարգ իրավիճակների
նախարարի «12» մարտի 2020թ. N 348-Լ և
Շրջակա միջավայրի նախարարի
«23» մարտի 2020թ. N 104-Լ համատեղ հրամանի
Օրինակելի ձև 4

ԱՆՏԱՌԱՅԻՆ, ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՐԴԵՀՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՀԱՋԱՆԳԵՐԻ ՍՏԱՑՈՒՄԸ, ՀՐԴԵՀՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿԱՄ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԲՌՆԿՎԱԾ ՀՐԴԵՀԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ԱՆՏԱՌԱՅԻՆ, ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՐԴԵՀՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՀԱՋԱՆԳԵՐԻ ՍՏԱՑՈՒՄԸ ԵՎ ՀՐԴԵՀՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

№	Հրդեհների վերաբերյալ տեղեկատվություն ստացող և հաշվառող մարմինը	Տեղեկատվության ընդունման ձևը և կոնտակտային տվյալները
1	2	3

ՑՈՒՑԱԿ
ԱՆՏԱՌԱՅԻՆ, ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՐԴԵՀՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԱՆՑՈՂ ԱՆՁԱՆՑ

Անտառտնտեսության, բնության հատուկ պահպանվող տարածքի անվանումը	Պատասխանատու անձի անուն, ազգանուն, հեռախոսահամար
1	2

Նշվում է անտառային տարածքում հրդեհի մասին վերջնական տեղեկատվության փոխանցման մասին:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿԱՄ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԲՌՆԿՎԱԾ ՀՐԴԵՀԻ ՄԱՍԻՆ

1. Հրդեհի առաջացման մասին տեղեկանալու ժամը_____
2. Հրդեհի մասին ՀՀ ԱԻՆ հայտնելու ժամը_____
3. Հրդեհի մասին հայտնող անձի տվյալները_____
4. Հրդեհի առաջացման վայրը_____
5. Վարչական տարածքի անվանումը, որտեղ առաջացել է հրդեհը_____
6. Անտառտնտեսության, բնության հատուկ պահպանվող տարածքի անվանումը, որտեղ առաջացել է հրդեհը_____
7. Հրդեհի տարածքին մոտ բնակավայրերի անվանումը_____
8. Մոտակա հրշեջ-փրկարարական ջոկատների տեղակայման վայրը_____
9. Մոտակա ջրաղբյուրների առկայությունը և գտնվելու վայրը_____
10. Հրդեհաշիջման սկզբնական ղեկավարի տվյալները_____
11. Հրդեհի սկզբնական մոտավոր մակերեսը (հա)_____
12. Հրդեհի հետևանքով այրված մակերեսը (հա) _____
13. Հրդեհաշիջման աշխատանքների սկսման օրը ժամը_____
14. Հրդեհի մեկուսացման օրը և ժամը_____
15. Հրդեհի մարման օրը և ժամը_____
16. Հրդեհաշիջման աշխատանքների ավարտման ժամը_____
17. Հրդեհաշիջմանը ներգրավված ուժերն ու միջոցները_____

Հավելված N 5
Արտակարգ իրավիճակների
նախարարի «12» մարտի 2020թ. N 348-Լ և
Շրջակա միջավայրի նախարարի
«23» մարտի 2020թ. N 104-Լ համատեղ հրամանի
Օրինակելի ձև 5

ՀՐԴԵՀԱՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Նշվում է այն մարմնի անվանումը, որն իրականացնում է տարածքի հրդեհավտանգության մոնիթորինգ:

№	Մոնիթորինգ իրականացնող մարմնի անվանումը	Տարածքը որտեղ իրականացվում է մոնիթորինգ	Պատասխանատու անձի տվյալները
1	2	3	4

Հավելված N 6
Արտակարգ իրավիճակների
նախարարի «12» մարտի 2020թ. N 348-Լ և
Շրջակա միջավայրի նախարարի
«23» մարտի 2020թ. N 104-Լ համատեղ հրամանի
Օրինակելի ձև 6

ՑԱՆԿ
ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿԱՄ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԲՌՆԿՎԱԾ ՀՐԴԵՀՆԵՐԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

ՀՀ	Ստորաբաժանման անվանումը և տեղակայման վայրը	Ստորաբաժանման ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը	Հեռախոսա համարները	Ստորաբաժանման տրամադրության տակ գտնվող տեխնիկական միջոցները
1	2	3	4	5